Աջակցություն գյուղական համայնքներին 1988-ից

ՀՀ, ք. Երևան 0001
110 Նալբանդյան փ.
+374 60 499 010
info@shen.am
www.shen.am

Շ - 31 – 25

23 հուլիսի 2025թ.

ՀՀ Աբովյան համայնքի ղեկավար

պարոն Է. Բաբայանին

Հարգելի պարոն Բաբայան,

Տեղեկացնում ենք, որ Կոկա-կոլա հիմնադրամը ֆինանսավորել է Շեն բարեգործական հասարակական կազմակերպության՝ Մայակովսկի բնակավայրի ոռոգման համակարգի հիմնանորոգման ծրագիրը: Ծրագրի նախնական հաշվարկված ընդհանուր արժեքն է **125,451,650** (Մեկ հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որից Հինադրամը ֆինանսավորել է **70,682,650** (Յոթանասուն միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, իսկ **54,769,000** (Հիսունչորս միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամը՝ համաձայն մեր պայմանավորվածության Աբովյան համայնքի ներդրումն է:

Խնդրում ենք հաստատել Աբովյան համայնքի մասնակցությունը և ներդրումը ծրագրին:

Կից Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում Շեն ԲՀԿ և Աբովյանի համայնքապետարանի միջև կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

Հարգանքով՝

Հ. Մինասյան

«Շեն» ԲՀԿ վարչության նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ 11-1855
«23» 07 2025 թ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N Մ-Կ/1

_____ 2025թ.

Ծրագրի իրականացման վայրը՝ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Մայակովսկի բնակավայր

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը, այսուհետ՝ **Շեն ԲՀԿ**, ի դեմս վարչության նախագահ Հայկ Մինասյանի, մի կողմից, և ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի մյուս կողմից, բոլորը միասին այսուհետ՝ Կողմեր, պայմանավորվում են հետևյալի մասին՝

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. «Կոկա-Կոլա» հիմնադրամի (TCCF) ֆինանսավորմամբ իրագործվող «Խմելու ջրի խնայողություն՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման միջոցով» ծրագրի շրջանակում իրականացնել Մայակովսկի բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգում՝ համաձայն Հավելված 1-ում նկարագրված աշխատանքների՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի մասնակցությամբ և ներդրմամբ:

1.2. Ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքների ժամկետը նշանակվում է 2025թ. օգոստոսի 1-ից 2026թ. դեկտեմբերի 30-ը :

2. ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ

2.1. Ծրագրի նախահաշվային արժեքը հաշվարկվել է **125,451,650** (Մեկ հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, (այսուհետ՝ ընդհանուր արժեք): Աշխատանքների և պարտականությունների նախնական բաշխումը Կողմերի միջև ներկայացված է սույն Համաձայնագրի Հավելված 1-ում:

2.2. Շեն ԲՀԿ-ն համաձայնվում է տրամադրել աշխատանքների համար անհրաժեշտ **70,682,650** (Յոթանասուն միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

2.3 Ծրագրի արժեքի մնացած մասը, որը հաշվարկված է **54,769,000** (Հիսունչորս միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ներդրումն է համաֆինանսավորման տեսքով:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Շեն ԲՀԿ-ն պարտավորվում է իրականցնել հետևյալ աշխատանքները.

3.1.1 Պատրաստել ոռոգման համակարգի հիմնանորոգման աշխատանքների նախագծային առաջադրանքը:

3.1.2 Կազմակերպել նախագծման մրցույթ օրենքով սահմանված կարգով, կնքել պայմանագիր հաղթող կազմակերպության հետ: Կատարել վճարում մատուցված ծառայության դիմաց:

3.1.3 Կազմակերպել շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթ օրենքով սահմանված կարգով, կնքել եռակողմ պայմանագիր՝ Շեն ԲՀԿ, Աբովյանի համայնքապետարանի և հաղթող կապալառու կազմակերպության հետ, որում սահմանված կլինի Կողմերի համաֆինանսավորման չափաբաժինը:

3.1.4 Ձեռք բերել շինարարության տեխնիկական հսկողության ծառայություն:

3.1.5 Ժամանակին ֆինանսավորել Աբովյանի համայնքապետարանի և կապալառու շինարարական կազմակերպության հետ կնքված եռակողմ պայմանագրով սահմանված հիմնանորոգման աշխատանքները՝ ստորագրված կատարողական ակտերի և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության եզրակացության հիման վրա:

3.1.6 Թիրախ բնակավայրում ձևավորել նախաձեռող խումբ (ՆԽ)՝ապահովելու ծրագրի իրականացման մասնակցային վերահսկողությունը, իրականացնել հանրային իրազեկման գործողություններ բնական ռեսուրսների խնայողական օգտագործման, կլիմայի փոփոխության մարտահրավերների և այլ թեմաներով:

3.2. Աբովյան համայնքը պարտավորվում է իրականացնալ հետևյալ աշխատանքները.

3.2.1 Իրականացնել Շեն ԲՀԿ և կապալառու շինարարական կազմակերպության հետ կնքված եռակողմ պայմանագրով սահմանված հիմնանորոգման աշխատանքների համաֆինանսավորում՝ Շեն ԲՀԿ-ի կողմից ստորագրված կատարողական ակտերի և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության եզրակացության հիման վրա:

3.2.2 Աջակցել Շեն ԲՀԿ-ին տվյալ ծրագրի իրականացմանն առնչվող բոլոր գործընթացներում:

3.2.3 Ընդունել իրականացված հիմնանորոգման աշխատանքները և ապահովել համակարգի արդյունավետ շահագործումն ու պահպանությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Կողմերն իրավունք ունեն մասնակցել նախագծման աշխատանքների կազմակերպմանը, ցանկացած ժամանակ վերահսկել և ստուգել կատարված աշխատանքների որակն ու ծավալը, ինչպես նաև ծրագրի ընթացքը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Աշխատանքների ավարտից հետո նրանց ընդունումը կատարվում է Շեն ԲՀԿ, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի և ՆԽ մասնակցությամբ: Աշխատանքները ստուգվում են և բավարար համարվելու դեպքում հանձվում համայնքին:

6. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Շեն ԲՀԿ ցանկացած ժամանակ կարող է հիմնավորված պատճառաբանությամբ լուծել Համաձայնագիրը:

6.2. Եթե Շեն ԲՀԿ լուծում է Համձայնագիր համայնքի կողմից այն խախտելու պատճառով, ապա Շեն ԲՀԿ-ն կարող է պահանջել համայնքին վճարել ծրագրի իրականացման նպատակով Շեն ԲՀԿ ծախսած (հաշիվ/ապրանքագրերով, պայմանագրերով և այլ վճարահաշվարկային փաստաթղթերով հիմնավորված) ամբողջ գումարը:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Տարաձայնություն կամ վեճ ծագելու դեպքում Կողմերը ջանում են դրանք լուծել բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ դա չի հաջողվում, կողմերը ստեղծում են «Վեճերի լուծման հանձնաժողով» վեճը առանց իրավապահ մարմինների մասնակցության լուծելու համար:

7.1.1 Վեճերի լուծման հանձնաժողովը կազմվում է Կողմերի մեկական ներկայացուցչից և մի անդամից, որն ընդունելի է երկու Կողմերի համար:

7.1.2 Վեճերի լուծման հանձնաժողովը Աբովյան համայնքի և Շեն ԲՀԿ փաստարկները լսելուց և քննարկելուց հետո ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է վերջնական որոշում:

7.2. Բոլոր այն հարցերը, որոնք նախատեսված չեն սույն համաձայնագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է ստորագրման պահից և ավարտվում է կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն՝	**ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք**
Հասցեն՝ 0001, Երևան, Նալբանդյան փ. 110	Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք□ Աբովյան, Բարեկամության հրապարակ 1
ՀՎՀՀ 01503283	ՀՎՀՀ 03561498
Հ/հ 1570027253620100 Ամերիաբանկ ՓԲԸ	Հ/հ 900102462323

Շեն ԲՀԿ	Աբովյան համայնք
«Շեն» ԲՀԿ Վարչության նախագահ՝ Հայկ Մինասյան	Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքների կատարման նախահաշիվ

Նկարագրություն	Գումարը (ՀՀ դրամով)
Աշխատավարձեր՝ ներառյալ հարկերը և տուրքերը	6,894,000
Խորհրդատվական ծառայություններ՝ ներառյալ բնապահպանական/գյուղատնտեսական, ինժեներական խորհրդատվություն, հաշվետվությունների կազմում ըստ դոնորի պահանջների, այլ:	15,415,750
Գնվելիք ապրանքներ և նյութեր (ուլտրաձայնային հոսքաչափ)	1,532,000
Իրազեկման և կրթական միջոցառումներ, ուսումնական նյութեր	306,400
Ճանապարհածախս	383,000
Վարչական ծախսեր	-
Շինարարական աշխատանքներ, ներառյալ 1300 մ գլխավոր խողովակաշարի վերականգնումը և 3,554 մ նոր բաշխիչ խողովակաշարի կառուցումը:	100,920,500
Ընդամենը	125,451,650

Շեն ԲՀԿ և Աբովյանի համայնքապետարանի ներդրումների հաշվարկված բաշխումը

#	Աշխատանքների նկարագրությունը	Ներդրումների բաժինը (ՀՀ դրամ)				
		Ընդհանուր	Շեն ԲՀԿ (TCCF)		Աբովյանի համայնք	
			Տարի 1	Տարի 2	Տարի 1	Տարի 2
1	Բաշխիչ ցանցի 3,554 մ նոր խողովակաշարերի կառուցում՝ d=100-125 մմ արդյունավետ խողովակներով և փականոց ինքնակարգավորիչներով	53,811,500	22,980,000	23,171,500	0	7,660,000
2	1300 մ ընդհանուր երկարությամբ 250 մմ տրամագծով արդյունավետ գլխավոր խողովակաշարի վնասված հատվածների փոխարինում (առաջին տարում)	47,110,000	0	0	47,110,000	0

3	250 մմ տրամագծով ստղպատե գլ խավոր խողովակաշ ապի վրա1.5 մ տրամագծով բետոնե իցիկու մ ու լ տրածայ նայ ին d=250 մմ ֆլ անշայ ին տիպի հոսքաչ ափի ձեռքբերու մ և տեղադրու մ	1,532,000	1,532,000	0	0	0
Ընդհանուր		**102,453,500**				